

**Հ ա ս տ ա տ վ ա ծ է՝**

«Ճարտարապետության և շինարարության  
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի  
գիտխորհրդի 2016թ.-ի փետրվարի 24-ի նիստում:  
Արձանագրություն № 01-02/16  
գիտխորհրդի նախագահ, ռեկտոր՝

**Գ.Շ. Գալստյան**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՈՒՍՈՒՑՄԱՆ**

**I. Ընդհանուր դրույթներ**

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հարապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգի և համալսարանի կանոնադրության հիման վրա:
2. Սույն կանոնակարգով սահմանվում է համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգն ու պայմանները:
3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան համալսարանում երկրորդ աստիճանն է, իրականացնում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման գործընթացներ:
4. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելության յուրաքանչյուր տարվա մասնագիտությունների ցանկը և տեղերի քանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևով:

## II. Մագիստրատուրայի ընդունելության կարգը

6. Համալսարանի մագիստրատուրա մրցութային հիմունքներով կարող են ընդունվել այն անձինք, ովքեր հաջողությամբ ավարտել են նախորդ բարձրագույն կրթության լրիվ ծրագրով ուսուցումը համապատասխան կամ հարակից մասնագիտության գծով և ունեն քաղաքացիության, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճան:
7. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունը և ուսուցումն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով՝ սահմանված կարգով ուսման վարձի մասնակի փոխհատուցման (գեղչի) իրավունքով:
8. Մագիստրոսի և դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ունեցող քաղաքացիները մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով առանց տարկետման իրավունքի:
9. Օտարերկրյա քաղաքացիները և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:
10. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է 2 փուլով:
11. 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ մասնագիտությունների Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված, պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ըստ հետևյալ տեղերի՝
- ա) պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման,
  - բ) առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ուսուցման:
12. 1-ին փուլով ընդունելության դիմումներն ընդունվում են ընթացիկ տարվա մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը:
13. 1-ին փուլով ընդունվածների հրամանագրումը կատարվում է հունիսի 10-ից 12-ը:
14. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պետական պատվերի շրջանակում կարող են մագիստրատուրա ընդունվել զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների համալսարանին հատկացված տեղերում (Բ.Ձ.), այդ խմբի դիմորդների մրցույթով: Նույն խմբի մրցույթից դուրս մնացած պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները կարող են

մագիստրատուրա ընդունվել մրցույթից դուրս վճարովի հիմունքներով, իսկ պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելու 3 տարին լրացած դիմորդները՝ մրցույթով, վճարովի հիմունքներով:

15. Մույն կանոնակարգի 14-րդ կետում նշված խմբի ուսանողների դիմումներն ընդունվում են մայիսի 29-ից մինչև հունիսի 20-ը և օգոստոսի 25-ից մինչև 31-ը, իսկ հրամանագրումը կատարվում է սեպտեմբերի 5-ին:

16. 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է՝ ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված, սահմանված կարգով ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի:

17. 2-րդ փուլով ընդունելության դիմումներն ընդունվում են ընթացիկ տարվա հունիսի 13-ից 20-ը և օգոստոսի 25-ից մինչև 31-ը, ընդունելությունն անց է կացվում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը:

2-րդ փուլով ընդունվածների հրամանագրումը կատարվում է մինչև սեպտեմբերի 11-ը:

18. Մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման համար համալսարանի ռեկտորի հրամանով և նախագահությամբ կազմվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտորը և համալսարանի ուսումնական գծով պրոռեկտորը, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, համապատասխան ֆակուլտետների ղեկանները, իրավաբանական բաժնի ներկայացուցիչը (քարտուղար):

19. Ընդունող հանձնաժողովը ուսումնասիրում ու քննարկում է մագիստրատուրայի ընդունելության մրցույթի հավակնորդների տվյալները և ըստ մասնագիտությունների բազային կրթության ընթացքում ուսումնասիրած առարկայական դասընթացների ցանկի և համալսարանի համապատասխան ֆակուլտետների կարծիքների հաշվառմամբ իրականացնում է մրցույթ:

20. Համալսարանի ռեկտորն ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացրած առաջարկություններով հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին՝ մագիստրատուրայում ուսումնառության վերաբերյալ պայմանագիրը կնքելուց և առաջին կիսամյակի ուսման վարձը վճարելուց հետո:

21. Մագիստրատուրայի ընդունելության մասին համալսարանի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների, տեղերի, կարգի և պայմանների վերաբերյալ:

### III. Մագիստրատուրայի ընդունելության պայմանները

22. Համալսարանի մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է բակալավրիատի գնահատականների, իսկ դիպլոմավորված մասնագետների դեպքում՝ ընդհանուր գնահատականների հաշվառմամբ՝ մրցութային հիմունքներով:
23. Մագիստրատուրայի ընդունելության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել այն դիմորդները, որոնց նախորդող բարձրագույն կրթության ավարտական աշխատանքի պաշտպանության գնահատականը՝ քսան միավորով գնահատման համակարգում կազմում է 18-20 միավոր (կամ գերազանց՝ հինգ միավորով գնահատման համակարգում):
24. Հարակից մասնագիտությամբ կամ այլ բուհերի շրջանավարտները հայտագրվող մասնագիտության մրցույթին մասնակցելու համար տվյալ մասնագիտությունից հանձնում են քննություն համալսարանի համապատասխան քննական հանձնաժողովում:
25. Մագիստրատուրայի վճարովի համակարգում սովորելու համար (առանց տարկետման իրավունքի) այլ բուհերի կամ հարակից մասնագիտությունների շրջանավարտները կարող են դիմել, եթե ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի տարբերությունը չի բացառում տվյալ մասնագիտությամբ մասնագիտական շարունակական կրթությունը:
26. Մագիստրատուրայի մրցութային ընդունելությունն իրականացնում է ընդունող հանձնաժողովը՝ համապատասխան ֆակուլտետի եզրակացության հաշվառմամբ: Ընդունող հանձնաժողովն ուսումնասիրում և քննարկում է մրցույթի հավակնորդների տվյալները և բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ ըստ մասնագիտությունների իրականացնում է մրցույթ:
27. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է ըստ հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.
- ա) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության միջին որակական գնահատականով (ՄՈԳ),
  - բ) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով,
  - գ) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատանքների առկայությամբ,
  - դ) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով:
28. Մրցույթի արդյունքներով մագիստրատուրա են ընդունվում ըստ հատկացված տեղերի առավել բարձր միավորներ ստացած դիմորդները:
29. Հավասար միավորների պայմաններում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ հատկանիշները.
- ա) «Գերազանցությամբ» դիպլոմի առկայությունը

բ) ավարտական աշխատանքի միավորը:

1. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում-հայտ համալսարանի ռեկտորի անունով՝ նշելով ընտրած մասնագիտությունը,

բ) անձնագիր,

գ) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի վկայագրերի (դիպլոմների) և դրանց հավելվածների (ներդիրների) սահմանված կարգով հաստատված պատճենները (արտերկրի բուհերում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

դ) ինքնակենսագրություն և 4 լուսանկար (3x4 չափսի),

ե) պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվածները՝ զինգրքույկ և դրանց հավելվածների (ներդիրների) սահմանված կարգով հաստատված պատճենները

30. Համալսարանը մագիստրատուրա ընդունված ուսանողների հետ կնքում է կրթական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդին: Համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական կիսամյակների:

#### **IV. Մագիստրատուրայում ուսուցումը**

31. Մագիստրանտները համալսարանի աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, հանրակացարաններից և այլ հնարավորություններից:

32. Երկրորդ կուրսում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին: Հավասար միավորների դեպքում առաջնահերթությունը տրվում է երկու կիսամյակների (մեկ ուսումնական տարվա) ընթացքում մասնագիտական առարկաներից առավել բարձր գնահատականներ ստացած ուսանողներին:

33. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է համալսարանի ավարտական փաստաթուղթ (մագիստրոսի վկայագիր)՝ համապատասխան ներդիրով:

34. Մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին և հիմնական կրթական ծրագրերին համապատասխան:

35. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար առկա ուսուցման համակարգում ուսուցման տևողությունը սահմանվում է երկու տարի, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ երկու և կես տարի:
36. Համալսարանի մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է առկա համակարգում ընդունելության ժամկետներում:

#### **V. Եզրափակիչ դրույթներ**

37. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
38. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի որոշումն ընդունելուց և համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո՝ հաջորդ օրը:
39. Այն հարցերը, որոնք ներկայացված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով:
40. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցված է համարվում համալսարանի գիտական խորհրդի 07.05.2015թ. թիվ 01-05/15 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգը»:

**Գիտական քարտուղար՝**

**Լ. Հ. Լևոնյան**

24 փետրվարի 2016 թ.

գիտխորհրդի արձանագրություն № 01-2/16